

ուսուցման ծրագրով նախատեսված 32.7 մլն. դրամ, ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից ծառայողական ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով հատկացված 10.0 մլն. դրամ գումարները ամբողջությամբ իրացվել են:

Մարզային ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծրագրով նախատեսված 80.9 մլն. դրամից ծախսվել է 65.7 մլն. դրամ, իսկ մնացած 15.2 մլն. դրամը չի իրացվել կապալառուների կողմից աշխատանքները լիարժեք չիրականացնելու հետևանքով:

Մարզպետարանի 2010թ. ներքին աուդիտի տարեկան ծրագրով աուդիտ է իրականացվել թվով 35 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, որի արդյունքներով Դպրոցների հաշվարկային հաշիվներին է վերականգնվել 1232.4 հազ. դրամ իսկ դասագրքերի շրջանառու հիմնադրամի հաշվարկային հաշվին 300.0 հազ. դրամ: Աշակերտների փաստացի թվաքանակը հավելագրելու հետևանքով դպրոցների 2010թ. ֆինանսավորման ծավալներից նվազեցվել է 13542.2 հազ. դրամ:

2010թ. ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության և ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության վարչության կողմից թվով 41 դպրոցներում ստուգվել է աշակերտների փաստացի թվաքանակը, որի արդյունքներով բացահայտվել են ընդհանուր գումարով 6637,0 հազ. դրամի հավելագրումներ, որը ևս նվազեցվել է կազմակերպությունների 2010թ. ֆինանսավորման ծավալներից:

Մարզպետարանի ենթակայության բոլոր 35 բաժնետիրական ընկերություններում վճարովիության սկզբունքով գործում են 9 վերստուգողներ, որոնց կողմից իրականացված ստուգումների արդյունքներով արձանագրվել են տարբեր տեսակի խախտումներ, որի համար վարչական պատասխանատվության են ենթարկվել շուրջ 10 պատասխանատու աշխատողներ և ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 4.8 մլն. դրամ գումար:

Չնայած վերստուգողների կողմից կատարված որոշակի աշխատանքներին՝ այնուամենայնիվ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գնահատման և ֆինանսական վերահսկողության վարչության կողմից մարզի 3 բժշկական կենտրոններում և <<Աբովյանի ծննդատուն>> ՊՓԲԸ-ում կատարված ստուգումների արդյունքում արձանագրվել են 18673.9 հազ. դրամի խախտումներ, որոնք ամբողջությամբ վերականգնվել և փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

Հաշվետու տարում զգալի աշխատանք է կատարվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ: Նախատեսված 1765.0 մլն. դրամի դիմաց հավաքագրվել է շուրջ 1814.0 մլն. դրամ, կամ եկամուտների պլանը կատարվել է 102.8%-ով:

Միաժամանակ պետք է նշել, որ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նախորդ տարվա համեմատ զգալի բարձրացել է համայնքների հողի հարկի և գույքահարկի հավաքագրման մակարդակը ինչպես տոկոսային արտահայտությամբ այնպես էլ բացարձակ թվով:

Որոշակի աշխատանքներ են կատարվել ապառքների հաշվառման և դրանց գանձման ուղղությամբ, որի արդյունքում հաշվետու տարում գանձվել է շուրջ 120.6 մլն. դրամի գույքահարկի ապառք, իսկ հողի հարկի ապառքների գանձումը կազմել է շուրջ 81.7 մլն. դրամ, որը հիմնականում <<Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքի կիրարկման արդյունք է:

Հողի և գույքի վարձակալական վճարների և տեղական տուրքերի գանձման ուղղությամբ առաջադրանքը կատարվել է համապատասխանաբար 104.6 և 101.7 %-ով:

Մարզի համայնքները և ենթակա հիմնարկները 2010թ. աշխատավարձի և սոց.վճարների գծով պարտքեր չունեն:

1.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հաշվետու տարում կազմակերպվել և անցկացվել են համայնքի ղեկավարի ընտրություններ՝ Հացավան, Արտավազ, Գետամեջ, Կոտայք, Զորավան համայնքներում, իսկ Արզական, Սևաբերդ, Նոր Արտամետ և Մարալանջ համայնքներում ավագանու ընտրություններ:

Տարածաշրջանային խորհրդակցություններում և մարզի խորհրդի նիստերում քննարկվել են Հայաստանի Հանրապետության օրենքների և կառավարության որոշումների, մարզպետի որոշումների և կարգադրությունների կատարման, ընտրությունների կազմակերպման և անցկացման, համայնքների ղեկավարների պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների կատարման, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման, տեղական ինքնակառավարման

մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության հետ առնչվող տարաբնույթ հարցեր:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մարզպետի 42 այցելություն մարզի համայնքներ, արտադրական ձեռնարկություններ, ուսումնական և առողջապահական կազմակերպություններ, որոնց արդյունքում լուծվել են մի շարք համայնքային խնդիրներ և հարցեր:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում հաստատվել է համայնքային ծառայության 611 պաշտոն, որոնցից տարեվերջի դրությամբ զբաղեցված են 577-ը, թափուր են 34 հաստիքներ, որից 6-ը աշխատակազմերի քարտուղարների:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն, մարզի 21 համայնքներում իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն, արդյունքները քննարկվել են, արձանագրված խախտումները հիմնականում շտկվել:

Առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվել է վերահսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների նկատմամբ:

Մարզի համայնքներում գործել են՝ 1273 առևտրի, 132 հանրային սննդի և 136 կենցաղային ծառայության օբյեկտներ, որոնցից նախորդ տարում ստուգումներ են կատարվել 693 առևտրի, 90 հանրային սննդի, 28 կենցաղային ծառայության օբյեկտներում:

Մարզի տարածքում գազամատակարարումն իրականացվում է «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի «Կոտայք» և «Աբովյան» գազամատակարարման և գազաֆիկացման մասնաձյուղերի միջոցով:

2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 67 համայնքներից գազաֆիկացված է 62-ը: Գազաֆիկացված չեն՝ Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները:

2010 թվականին գազաֆիկացված համայնքների թիվն ավելացել է 2-ով՝ Նուռնուս, Զովաշեն իսկ բաժանորդների քանակը 1206 -ով, կազմելով 58316:

Բաժանորդների քանակը 1991 թվականի համեմատ ավելացել է 8387-ով, կամ 15 %-ով:

Ոչ պետական միջոցների ներգրավմամբ մարզի թվով 2 համայնքներում /Նոր Հանճրն, Զովաշեն/ իրականացված գազաֆիկացման աշխատանքների ներդրման ծավալը կազմել է 19.0 մլն. դրամ: Կառուցվել է 2.5 կմ երկարությամբ գազատար, որից կօգտվեն թվով 145 ընտանիքներ:

Էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Գեղամա» մասնաձյուղի 5 էլեկտրական ցանցերի միջոցով:

2010 թվականին էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է՝

Սպառման բնագավառ	2009թ.		2010թ.		աճը /նվազումը/ %
	մլն. կվտժ	մլդ. դրամ	մլն. կվտժ	մլդ. դրամ	
Բնակչություն	134.927	3.753	140.86	4.116	+7.0
Հանրային	247.765	5.622	169.9	4.156	-7.0
Ընդամենը	382.692	9.375	310.76	8.272	-0.8

2010 թվականին 1795 զինակոչիկի փոխարեն գորակոչվել է 1831-ը, կամ պլանը կատարվել է 102,0 %-ով, տարկետում է տրվել 396 գորակոչիկի:

Զորակոչից խուսափողների ցուցակները սահմանված կարգով ներկայացվել են դատախազություն, վերջինիս կողմից հարուցվել է քրեական 68 գործ. Արդյունքում 2010 թվականի աշնանային գորչակոչի ընթացքում հայտնաբերվել և գորակոչվել են 8 գորակոչիկներ:

Հարկ է նշել, որ դեռևս բավարար չեն նախագորակոչիկների հաշվառման (կցագրման) ուղղությամբ մարզի զինվորական կոմիսարիատների կողմից իրականացվող աշխատանքները. 2010 թվականի կցագրման ենթակա 2141 նախագորակոչիկներից կցագրվել են 1764-ը: Չկցագրվածների թիվն ըստ զինվորական կոմիսարիատների այսպիսին է՝ Հրազդան – 83, Կոտայք – 166, Նաիրի – 72, Չարենցավան – 56:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն, կցագրման գործընթացի հարցում պատասխանատվության և պարտականությունների իրենց բաժինն ունեն պետական և

տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձինք:

Մարզպետարանը մշտապես հետամուտ է լինելու կցագրման գործընթացի արդյունավետության ապահովմանը:

2010 թվականի սեպտեմբերի 11-17-ը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում, մարզում անցկացվել է «Արմենիա 2010» արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման միջազգային դաշտային վարժանքը, որին մասնակցեցին 28 երկրների ներկայացուցիչներ:

Մարզի տարածքում բնակչության պատասպարման և անհատական պաշտպանական միջոցներով ապահովվածության իրավիճակը այսպիսին է.

առկա 17 ապաստարաններից 12-ը ենթակա են վերանորոգման,

-անհատական պաշտպանական միջոցներով մարզի բնակչությունը գրեթե ամբողջությամբ ապահովված չէ,

-բնակչության ազդարարման համակարգի պատրաստականության աստիճանը նույնպես բարվոք վիճակում չէ՝ անհրաժեշտ 133 էլեկտրական շչակներից առկա է 121-ը, որից գործող են 60-ը:

Մարզպետի կողմից հաստատված պլան գրաֆիկի համաձայն մարզային ենթակայության կազմակերպությունների ու մարզպետարանի աշխատակիցներ, համայնքների ղեկավարներ և մասնագետներ՝ թվով 167 ունկնդիր Արտակարգ իրավիճակների նախարարության

«Ճգնաժամային ակադեմիա» ՊՈԱԿ-ում մասնակցել են համապատասխան վերապատրաստման դասընթացների:

Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության 2010 թվականի հիմնական միջոցառումների պլանով նախատեսված թվով 31 միջոցառումները կատարվել են ամբողջությամբ:

Հաշվետու տարում մարզի տարածքում արձանագրվել է 1031 հանցագործության դեպք, որոնցից բացահայտվել է 851-ը՝ 81,9%, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2,4%-ով, որից 738-ը քրեական հանցագործության գծով՝ բացահայտվել են 608-ը կամ 77,9%-ը, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 3,6 %-ով:

2010 թվականին տեղի է ունեցել 161 ճանապարհատրանսպորտային պատահար, որի հետևանքով վիրավորվել են 231 քաղաքացի և մահացել 31-ը: 2009 թվականի համեմատ պատահարների քանակը նվազել է 10-ով, վիրավորների թիվը 19-ով, իսկ մահացու ելքովը 16-ով:

Արձանագրվել է ճանապարհային երթևեկության կանոնների 80548 խախտումներ, որից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցներ վարելը՝ 323:

7535 գործի նյութերն ուղարկվել են դատարան՝ վարչական տուգանքի չափը 203,432 մլն. դրամ: 2009թ.-ի համեմատ ավել է հայտնաբերվել ճանապարհային երթևեկության կանոնների 5965 տարբեր խախտումներ:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Կոտայքի տարածքային բաժանմունքներում 2010 թվականի ընթացքում հաշվառել են 14855 քաղաքացի, հաշվառումից հանվել են 5504-ը, իսկ ՀՀ քաղաքացիության անձնագրեր է տրվել 7151 քաղաքացու:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2010 թվականին մարզպետարանի ենթակայությամբ գործել են 104 կրթական հաստատություններ, որոնցից 59-ը՝ միջնակարգ հանրակրթական, 31-ը՝ հիմնական հանրակրթական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/, 2-ը՝ նախնական մասնագիտական /արհեստագործական ուսումնարաններ/, 11-ը՝ ավագ դպրոցներ, որոնք արդեն հանձնվել են ԿԳ նախարարությանը: Մարզի տարածքում գործել են նաև 2 կրթահամալիր, 2 մասնավոր դպրոցներ, 6 քոլեջներ և 1 ոչ պետական բուհ: «Բացվող Այգ» մասնավոր դպրոցը չլիցենզավորվելու պատճառով փակվել է:

Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում 2010-11 ուս. տարում ձևավորվել է 1577 դասարան՝ 32589 աշակերտներով: Առաջին դասարան հաճախել են 3455 աշակերտներ, որը գերազանցում է 2009-2010 ուսումնական տարվա առաջին դասարանցիների թվին /շուրջ 100 երեխա/: Առաջին դասարանցիների թիվը գերազանցում է նաև 11-րդ

դասարանցիների թվին. Սա ենթադրում է, որ հաջորդ տարիներին աշակերտների թվի աճը կշարունակվի:

2009-2010 ուսումնական տարում դպրոցն ավարտած 3340 շրջանավարտներից միասնական քննություններ են հանձնել 38.7%-ը /1293/, որոնց շուրջ 90 %-ից ավելին /1250/ ընդունվել են ԲՈՒՀ-եր: Նախորդ տարվա համեմատ ԲՈՒՀ –եր ընդունվողների թիվն ավելացել է 180-ով:

Մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 3400 ուսուցիչներ, որոնց ավելի քան 86%-ն ունի բարձրագույն մանկավարժական, շուրջ 12%-ը՝ միջին մասնագիտական, իսկ մնացածը՝ բարձրագույն կամ միջին ոչ մասնագիտական կրթություն: Լեռնային և բարձր լեռնային գոտում գտնվող ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 1100-ը:

Այս ուսումնական տարվա ընթացքում ընդունված մանկավարժներն ունեցել են բացառապես բարձրագույն մասնագիտական կրթություն: Մանկավարժական կադրերի թափուր աշխատատեղերը համալրվում են մրցութային կարգով: Ներկայումս դպրոցներում մանկավարժական կադրերի թափուր աշխատատեղեր չկան:

Մարզի լեռնային, բարձր լեռնային և հեռավոր բնակավայրերի դպրոցները մասնագետ կադրերով համալրելու գործընթացը շարունակվել է նաև այս ուսումնական տարվա ընթացքում: Նպատակային գործուղումով բարձրագույն կրթություն ստացած 5 ուսուցիչներ արդեն աշխատանքի են անցել նման կարգավիճակով դպրոցներում: Կրթության և գիտության նախարարության ուղեգրերով աշխատում են 52 մանկավարժներ: Շուրջ 19 ուսուցիչներ ստանում են լրացուցիչ մասնագիտական կամ շարունակական բարձրագույն մանկավարժական կրթություն:

Այժմ թափուր է թվով 11 դպրոցների գործադիր տնօրենների պաշտոններ: Այս դպրոցներում ժամանակավոր պաշտոնակատարներ են նշանակվել նախկին տնօրենները: Մեր մարզից տնօրենների վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 20 տնօրեններ ու ուսուցիչներ: Հավաստագրումն իրականացվելուց հետո դպրոցների խորհուրդները կհայտարարեն մրցույթներ:

Մարզային ենթակայության հանրակրթական հաստատությունների 10% ստացել են լիցենզիաներ, իսկ մնացյալը ներկայացրել են լիցենզավորվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը և առկա են նրանց լիցենզիա տրամադրելու մասին ՀՀ ԿԳ նախարարի հրամանները, բացառությամբ Ողջաբերդի միջնակարգ դպրոցի, որը գտնվում է սողանքային տարածքում, իսկ ուսումնական գործընթացը կազմակերպվում է տնակային պայմաններում:

Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանում և Երևանի Օտար Լեզուների Ինստիտուտում վերապատրաստվել են ավագ դպրոցներում դասավանդող 150 ուսուցիչներ: Ընդհանուր առմամբ վերապատրաստվել են 948 մանկավարժներ:

Մարզի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունները, կրթակարգի պահանջներին համապատասխան, ապահովված են համակարգիչներով, իսկ ինտերնետ կապով համալրվել են ևս 10 դպրոցներ, որի արդյունքում մարզի բոլոր դպրոցները ունեն ինտերնետ կապ ու շարունակվում են տարբեր առարկաների էլեկտրոնային ձեռնարկները ձեռքբերումները, որոնց հիման վրա դպրոցների մեծ մասում ստեղծվել են նաև էլեկտրոնային գրադարաններ:

Չնայած իրականացվող միջոցառումներին՝ ներկայումս կրթական հաստատություններում համարյա բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումներն ու նյութերը, դպրոցների մի մասը դեռևս ունեն աշակերտական, ուսուցողական սեղան-նստարանների, փափուկ գույքի կարիք: Հրատապ է նաև որոշ դպրոցներում լոկալ ջեռուցում ունենալու խնդիրը:

Մարզպետարանի ենթակայության կրթական հաստատություններից 73-ը/ նախորդ տարի 70/ ջեռուցվում են սեփական կաթսայատների միջոցով, 7-ը՝ գազի վառարաններով, իսկ մյուսներում ջեռուցումն իրականացվում է էլեկտրական ջեռուցիչներով և վառելիքայտով: Մարզի բոլոր քաղաքային դպրոցները ունեն լոկալ ջեռուցում:

2010 թվականին մարզպետարանի և Քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ շինարարական հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել համապատասխանաբար 9 և 12 հանրակրթական դպրոցներում:

Մարզում գործում են համայնքային ենթակայության 51 նախադպրոցական հիմնարկներ, 2010թ. որոշակի աշխատանք է կատարվել նախադպրոցական հաստատությունների գործունեության բարելավման ուղղությամբ: Ձորաղբյուր համայնքում կառուցվել ու կահավորվել

է նոր մանկապարտեզ, իսկ Բյուրեղավան քաղաքում ավագ դպրոցից մեկ մասնաշենք հատկացվել է համայնքին նախադպրոցական կրթություն իրականացնելու նպատակով:
Դեռևս բազմաթիվ խնդիրներ կան կապված դպրոցական շենքերի կառուցման և հիմնանորոգման, ինչպես նաև դրանց կահավորման և գույքի ձեռքբերման ուղղությամբ, որոնք արդեն իսկ ընդգրկվել են մարզի զարգացման 2011-2014 թթ. ծրագրում: Հուսով ենք, որ այդ խնդիրները նախատեսված ժամկետներում կստանան իրենց լուծումը:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՄՊՈՐՏ

Մարզում գործում են 25 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 6 թանգարաններ, 2 թատրոններ, 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 72 գրադարաններ, 62 մշակույթի տներ և ակումբներ, 1 պատկերասրահ, 2 երաժշտական և 1 գեղարվեստի ստուդիաներ, 15 մանկապատանեկան մարզադպրոցներ:

Գեղարվեստական կրթության հաստատություններում սովորում են 4150 երեխաներ, աշխատում են 474 մանկավարժներ: Մարզադպրոցներում և մարզական խմբակներում պարապում են 5500 երեխաներ, որոնց հետ աշխատում են 110 մարզիչ մանկավարժներ:

Մարզն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել միջազգային և հանրապետական մի շարք մշակութային և մարզական փառատոններում ու մրցույթներում՝ արձանագրելով զգալի հաջողություններ և ձեռքբերումներ: Այդ թվում մարզի մարզադպրոցների սաները բարձր նվաճումների են հասել Աշխարհի, Եվրոպայի, Հանրապետության առաջնություններում և միջազգային մրցաշարերում: Եղվարդի մարզադպրոցի սան Վաչիկ Վարդանյանը հռչակվել է սամբոյի Աշխարհի մեծահասակների չեմպիոն, Քասախի մարզադպրոցի սան Հռիփսիմե Խուրշուդյանը հռչակվել է ծանրամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնության չեմպիոն, Էլեն Գրիգորյանը դարձել է ծանրամարտի Եվրոպայի մինչև 23 տարեկանների առաջնության արծաթե մեդալակիր և այլն:

<<Լավագույն մարզական համայնք>> ստուգատեսի եզրափակիչ փուլում մարզի Չարենցավան համայնքը ճանաչվեց հանրապետության լավագույն համայնքը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

	2010թ.	2009թ.	դինամիկան
Նպաստառու ընտանիքներ -	8294	9164	- 870
Կենսաթոշակառուներ -	40143	40174	- 31
Գործազուրկներ -	7328	7964	- 636
Փախստականներ -	11800	11800	

2010թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի նպաստառու ընտանիքների թիվը 8294 էր, որը նախորդ տարվա հետ համամատած պակաս է 870-ով, պատճառը ընտանեկան նպաստների հասցեականության բարձրացման նպատակով կատարված տնային այցելություններն են և հարակից բազաների համադրումները: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում սխալ նշանակված նպաստները դադարեցվել են և կատարվել է ետգանձում, որը կազմում է շուրջ 6մլն. 850հազ.դրամ:

Մոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությամբ հրատապ դրամական օգնություն է տրամադրվել 2758 ընտանիքի, որոնց կարիքավորության միավորը 30.00-ից ցածր է եղել: ԽՍՀՄ բանկերում ունեցած ավանդների փոխհատուցման համար դիմել են 6000 քաղաքացի: 2006-2010թթ. վճարվել է 2141 անձի, որից 250-ը Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին:

Բնակարանի կարիք ունեցող փախստական ընտանիքների թիվը – 685 է:

2003թ. օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայության կողմից հաշվառված առաջնահերթ բնակարանի կարիք ունեցողների թիվը – 551 փախստական ընտանիք էին, որոնք ընդգրկվել են <<Բնակարանների գնման վկայագրերի տրամադրման>> ծրագրում:

2006-2010թ. ընթացքում բնակարանի գնման վկայագիր է տրամադրվել 426 ընտանիքի, որից բնակարան են ձեռք բերել 318 ընտանիքներ:

2010թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ բնակարանի կարիք ունեն ժամանակավոր կացարաններում բնակվող 326 փախստական ընտանիքներ:

2010թ. ընթացքում մարզում ՀՀ քաղաքացիություն են ընդունել 28 փախստականներ, իսկ ընդհանուր առմամբ 1999-2010թթ. ընթացքում ՀՀ քաղաքացիություն են ընդունել 8503 փախստականներ: Դեռևս մարզում ՀՀ քաղաքացիություն չեն ընդունել շուրջ 3297 փախստականներ:

2010թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 7328 գործազուրկ, որից 5053-ը կանայք: Նախորդ տարվա համեմատ զբաղվածության կենտրոններում գրանցվել են 636-ով պակաս գործազուրկներ: Աշխատանքի է տեղավորվել 998 մարդ, որից 505-ը կին:

<<Վարձատրվող հասարակական աշխատանքներ>> ծրագրերի իրականացման համար մարզին տրամադրվել է 70մլն. 900 հազ.դրամ, որը նախորդ տարվա հետ համեմատ ավել է 22 միլիոնով: Նշված գումարը տրամադրվել է 20 համայնքների, 36 ծրագրով: Դեկտեմբերի 1-ի դրությամբ ծրագրերը ավարտվել են, աշխատողների աշխատավարձերը վճարվել են, արդյունքում ժամանակավոր աշխատատեղերով ապահովվել են շուրջ 395 մարդ:

Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքների բնակարանի կամ բնակարանային պայմանների բարելավման նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցության հերթացուցակներում 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ հաշվառվել է 28 ընտանիք:

2010 թվականի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված ծրագրով Կոտայքի մարզի 3 անապահով ընտանիքների 30 մլն. 14 հազ.դրամ գումար է տրամադրվել բնակարան ձեռք բերելու համար:

1999-2010թթ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի զոհված և հաշմանդամ դարձած 194 անապահով զինծառայողների ընտանիքներ:

2010թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզում հաշվառված են բնակարանի կարիք ունեցող 81 և բնակարանի բարելավման կարիք ունեցող 177 զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ/ընդհանուր 258/:

Մարզի զոհված ազատամարտիկների և կարիքավոր ընտանիքների 150 երեխաներ, որից 20-ը ԼՂՀ-ի Շահումյանի շրջանից, երկու հերթափոխով իրենց ամառային հանգիստը հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 9-ը անցկացրել են <<Հեքիաթների կիրճ>> մանկապատանեկան ճամբարում:

ՀՀ պետական բյուջեով հաշվետու տարում մարզպետարանին հատկացված 20մլն. դրամ ֆինանսական միջոցներից մարզի 1176 սոցիալապես անապահով ընտանիքների տրամադրվել են դրամական օգնություններ:

Մարզի առողջապահական հաստատությունները ներկայացված են 40 ընկերություններով, որոնցից 35-ը 100 տոկոս պետական բաժնեմասով /բաժնետոմսերի կառավարման լիազորությունները տրված են ՀՀ Կոտայքի մարզպետին/`

4 բժշկական կենտրոն / Ջրագդան, Աբովյան, Չարենցավան, Նաիրի/

1 ծննդատուն /Աբովյան/,

1 քաղաքային պոլիկլինիկա /Նոր Հաճրն/,

1 մարզային արյան բանկ /Ջրագդան/

2 առողջության կենտրոն /Գառնի, Արգել/,

26 առողջության առաջնային պահպանման հաստատություններ 5 ընկերությունների բաժնետոմսերը սեփականության իրավունքով անհատույց հանձնվել են համայնքներին. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 2-ի թվի 1911-Ն որոշմամբ իրականացվել է <<Ջրագդանի ԲԿ>> ՓԲԸ-ի և <<Ջրագդանի ծննդատուն>> ՊՓԲԸ-ի միաձուլման գործընթացը.

Մարզի առողջապահության համակարգի հիվանդանոցային ծառայության մահճակալային ֆոնդը 250 է, որից թերապևտիկ պրոֆիլի 75

վիրաբուժական 58

ինֆեկցիոն 22

մանկաբարձագինեկոլոգիական 95

Առողջապահական համակարգում աշխատողների թիվը շուրջ 1800 է, որոնցից

բժիշկներ 420

2010 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից մարզպետարանի ենթակայության առողջապահական ընկերությունների գործադիր տնօրենների թափուր պաշտոնների համար սահմանված կարգին համապատասխան կազմակերպվել է 7 մրցույթ:

2010 թվականի ամռանը շահագործման է հանձնվել Համաշխարհային Բանկի վարկավորմամբ կառուցված <<Բուժականի ԲԱ>> ՊՓԲԸ-ի շենքը. Արգնի համայնքի աջակցության շնորհիվ ընթացիկ կապիտալ վերանորոգման է ենթարկվել <<Արգնիի ԲԱ>> ՊՓԲԸ-ի շենքը մասնակի վերանորոգվել կահավորվել և սարքավորումներ են ձեռք բերվել նաև Ջրագդանի, Աբովյանի Նաիրիի, Չարենցավանի բժշկական կենտրոններում, Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկայում, Քասախի ԱԱՊԿ-ում:

2010 թվականի ընթացքում մարզի առողջապահական ենկերություններում /անկախ սեփականության ձևից և պատկանելիությունից/ իրականացվել է 2 մլրդ 42մլն դրամի պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, որից արտահիվանդանոցային ծառայությունների ծրագրերով 1 մլրդ 329 մլն 985 հազ դրամ և հիվանդանոցային ծառայությունների ծրագրերով 705 մլն 457 հազ դրամ:

2010 թվականի ընթացքում մարզի բուժհաստատություններում վճարովի սկզբունքով և պետության կողմից երաշխավորված /անվճար/ հիվանդանոցային բուժօգնություն են ստացել 9536 /2009թ. 7690/, որից ծննդալուծումների կապակցությամբ 3131 /2009թ.3249/, հիվանդության կապակցությամբ 6395 /2009թ. 4441/: Ամբուլատոր հաճախումները` 662 հազ / 2009թ. 653 հազ/: Մեկ բնակչի հաշվով հաճախումների թիվը կազմել է 2.3 .

Լիարժեք կայացած է <<Օնոկոգնության պետական հավաստագրերի>> տրամադրման համակարգը. 2010 թ. ընթացքում մարզի ծննդատներում գրանցվել է 3131 ծնունդ, որը կազմում է հանրապետությունում գրանցված ծնունդների ընդհանուր թվի / 44710 ծնունդ/ 14 տոկոսը. Մայրական մահացության դեպք հաշվետու տարում չի գրանցվել:

2010 թվականի ընթացքում արձանագրվել է վճարովի ծառայություններից գոյացած գումարների զգալի աճ 2009 թվականի համեմատ շուրջ 56 մլն դրամ, որը պայմանավորված է 2010 թվականի տարեսկզբում առողջապահական ընկերություններում տրամադրվող բժշկական ծառայությունների գների աճով /հիմնադրի կողմից հաստատվող բժշկական ծառայությունների գները հնարավորինս մոտեցվել են մատուցվող ծառայությունների իրական արժեքին/. Մարզի 40 առողջապահական առևտրային կազմակերպություններից միայն 14 ընկերություններում է դեռևս ընձեռված այլ եկամուտներ ունենանու հնարավորություն / ներքին ռեսուրսների բացակայություն/:

2010թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի առողջապահական ընկերությունների կրեդիտորական պարտքերը կազմել են մոտ 2.5 մլն դրամ /Նաիրիի ԲԿՓԲԸ-ի գույքահարկ/:

Աշխատավարձի պարտքեր չեն գոյացել:

2010 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի և ԼՂՀ Շահումյանի շրջանի միջև փոխադարձ համագործակցության ծրագրի շրջանակներում մարզի առաջատար բժշկ-մասնագետների կողմից կազմակերպվել է այցելություն Քարվաճառի բուժմիավորում և իրականացվել է Շահումյանի շրջանի բնակչության անվճար բժշկական օգնություն և սպասարկում. Մասնավորապես՝ բժշկական գննության են ենթարկվել 100 հիվանդ, որոնցից 25-ը անցել է աշխտորոշիչ ստնոգրաֆիկ հետազոտություն. Կազմակերպվել է նաև հիվանդանոցային բուժման կարիք ունեցող անձանց անվճար բուժումը և հղիների ծննդալուծումը մարզի բուժհաստատություններում.

Մարզի առողջապահության համակարգի հիմնախնդիրներից են համարվում շտապ բժշկական օգնության ծառայության բարեփոխումների անհրաժեշտությունը, հիվանդանոցային համակարգի և Հրազդանի մարզային արյան բանկի վերանորոգումը և արդի սարքավորումներով հագեցումը, 8 ԱԱՊ հաստատությունների /Լեռնանիստ,Քաղսի, Սոլակ,Վերին Պողոնի,Կոտայք, Մայակովսկի, Ակունք, Ձորաղբյուր համայնքներում/ վերանորոգման աշխատանքները, ախտաբանաանատոմիական ծառայության արդիականացումը և բժշկական թափոնների ոչնչացման և վարակազերծման համակարգի ստեղծումը.

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2010թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ Կոտայքի մարզպետարանի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնում տարածքային հաշվառման մեջ են գտնվում 55 ԱԾԽՄ երեխաներ և 43 ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձ, նրանցից հաշվետու տարում հաշվառվել են 19-ը, հաշվառումից հանվել են 16-ը:

Մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում ուստիկանության ԱԳ բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա հաշվետու տարում հաշվառվել են 35-ը, հաշվառումից հանվել՝ 38-ը: Այս պահին հաշվառման մեջ են գտնվում 25 իրավախախտ անչափահասներ: Ուստիկանության անչափահասների գործերով զբաղվող բաժանմունքների հետ համատեղ իրականացվել են անչափահասների կողմնորոշման, տեղավորման և մուրացկանության, թափառաշրջիկության, իրավախախտության, հանցագործության միտվածության կանխարգելման աշխատանքներ, մոտ 13%-ով նվազելուն գուզընթաց անցած տարիների հետ համեմատած դրական տեղաշարժ կարելի է համարել այն, որ մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում հաշվառված իգական սեռի անչափահաս չունենք:

Համապատասխան եզրակացությունների հիման վրա 2010թ. ընթացքում մանկատուն է տեղավորվել 9 երեխա, մանկատներից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 6 երեխա:

Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման և հատուկ կարիքի գնահատման առումով: Այժմ վկայագրված են մարզի 229 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, նրանցից 70-ը վկայագրվել են 2010թ.-ի ընթացքում: <<Բյուրեղավանի երեխաների ինամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ են տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող սոցիալապես անապահով ընտանիքների 27 երեխաներ:

Մարզում բնակվող 17 դիմումատու քաղաքացիներ հաշվառվել են՝ որպես երեխա որդեգրել ցանկացող թեկնածուներ:

2010թ. ընթացքում հայտնաբերվել է ծննդյան վկայական չունեցող 56 երեխա, նրանցից 43-ի ծննդյան վկայականների վերականգնման հարցը լուծվել է, իսկ 13-ի, ծնողների արտերկրում հաշվառված լինելու պատճառով, խնդրի լուծումը գործընթացի մեջ է:

Հանրակրթությունից դուրս մնացած 44 երեխաներ են հայտնաբերվել, ուսումնասիրության արդյունքում նրանցից 30-ը վերադարձել են դպրոց, 14-ը հաշվառման մեջ են:

Մարզում դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքների և երեխաների կարիքները բավարարելու համար անհրաժեշտ ծրագրերի և ծառայությունների վերաբերյալ առաջարկություններ

- խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման շարունակականության ապահովում,
- համայնքներում երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում,
- հատուկ կարիքներով երեխաների համար վերականգնողական կենտրոնի ստեղծում և վերականգնողական կենտրոնում <<Վաղ միջամտության>> ծառայությունների ստեղծում:

2010թ. հողային հաշվեկշռի համաձայն մարզում առկա են 160.1 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որոնք կազմում են հանրապետության նմանատիպ հողերի 7.9 տոկոսը, այդ թվում՝ վարելահողեր՝ 37.8 հազար հա, բազմամյա տնկարկներ՝ 2.4 հազար հա, խոտհարքներ՝ 10.8 հազար հա, արոտներ՝ 84.5 հազար հա: Նշված տարածքներից պետական և համայնքային սեփականություն են համարվում 8815 հա վարելահող, 2710 հա խոտհարք, 107.8 հա բազմամյա տնկարկ, 84.3 հազար հա արոտ և 24.6 հազ. հա այլ հողեր:

<<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի ընդունման արդյունքում ամբողջությամբ ավարտվեցին Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը հարակից համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու աշխատանքները: Փոփոխությունների են ենթարկվել մարզի թվով 42 համայնքների վարչական սահմանները, ամբողջապես լուծվել են ինչպես մարզի համայնքների, այնպես էլ հարակից մարզերի միջև առկա սահմանային խնդիրները:

Մարզի համայնքների կողմից վարձակալության են տրամադրվել 7956 հա վարելահող, բազմամյա տնկարկներն ամբողջությամբ, 1820 հա խոտհարք և 23100 հա արոտ, կնքվել և պետական գրանցում են ստացել շուրջ 3600 պայմանագրեր:

2010թ. ընթացքում մարզի 48 համայնքներում տեղի են ունեցել համայնքային սեփականության հողերի օտարումներ՝ աճուրդային կարգով, որի ընթացքում օտարվել է 155.8 հա գյուղնշանակության հողեր, 41.5 հա բնակավայրերի հողեր, 3.0 հա հատուկ պահպանվող հողեր, 2.3 հա արտադրական նշանակության հողեր՝ 950 մլն դրամ ընդհանուր արժեքով:

2009թ ընթացքում մարզի տարածքում օտարվել էր 309.4 հա գյուղնշանակության հողեր, 22.2 հա բնակավայրերի հողեր, 10.3 հա՝ հատուկ պահպանվող հողեր, 12.9 հա արտադրական և եներգետիկ հողեր՝ 1 մլրդ 74 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Համայնքներում առկա հողային ռեսուրսները հնարավորինս արդյունավետ տնօրինելու նպատակով համայնքների ղեկավարներին առաջարկվել է օտարման ներկայացվող համայնքային սեփականության հողերի մեկնարկային գները սահմանել կադաստրային ամբողջ արժեքի չափից ոչ պակաս: Սրա արդյունքում կտրուկ բարձրացել է 1 քմ հողամասի օտարման արժեքը, որը մարզի համայնքների գերակշիռ մասում հավասարվեց շուկայականին:

Այս քայլի շնորհիվ էր, որ օտարված հողամասերի մակերեսների բազմակի անգամ կրճատման պայմաններում գրեթե նույնն են մնացել օտարումներից գոյացած միջոցների ընդհանուր ծավալները:

Համայնքներում հողերի աճուրդներից գոյացած միջոցները հիմնականում ուղղվել է համայնքների քաղաքաշինական և հողաշինարարական ծրագրային փաստաթղթերի ստեղծմանը: Ներկայումս մարզի 6 քաղաքային /Հրազդան, Ծաղկաձոր, Աբովյան, Չարենցավան, Նոր Հաճրն, Եղվարդ/ և 5 գյուղական /Արտավազ, Հանքավան, Արզական, Ջրվեժ, Գառնի/ համայնքներ ունեն բնակավայրերի գլխավոր հատակագծեր, Նոր Գյուղ, Քասախ և Բալահովիտ համայնքները ունեն հաստատված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ, իսկ թվով 21 համայնքների համար նշված փաստաթղթերի կազմումը և համաձայնեցումը ավարտական փուլում են:

Անհրաժեշտ է նշել, որ վերը նշված համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները պատվիրվել և դրանց համար համայնքների կողմից համապատասխան վճարումները կատարվել են մինչև 2010 թվականի մարտ ամիսը, այնպիսին՝ մինչև ՀՀ կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման, համաձայնեցման և հաստատման կարգի սահմանելը: Ներկայումս ամբողջովին ավարտված է Նոր Արտամետ, գրեթե ավարտված է Արամուս, Ակունք, Արագյուղ և մի շարք այլ համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների համաձայնեցման, ինչպես նաև փորձաքննության աշխատանքները: Առարկություններ կան միայն ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից, որը պահանջում է, որ գոտիավորման սխեմաները կազմվեն պարզեցված գլխավոր

հատակագծերի կազմում, այսինքն՝ համայնքները պետք է կատարեն չհիմնավորված լրացուցիչ ծախսեր այն դեպքում, երբ դրանց անհրաժեշտությունը գրեթե չկա:

Հարցին լուծում տալու համար առաջարկում ենք. այն համայնքներում, որտեղ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմման աշխատանքները և վճարումները կատարվել են մինչև ՀՀ կառավարության կողմից գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի հաստատման կարգի սահմանելը, թույլատրել և կիրառելի դարձնել գոտիավորման սխեմաները՝ կազմված ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N625-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 22 համայնքներում:

Ստուգումների արդյունքներում հայտնաբերված տարաբնույթ խախտումների, մասնավորապես՝ հողերի օտարման սահմանված կարգը խախտելու, ապօրինի հողօգտագործումը և հողերի ոչ նպատակային օգտագործումը չկանխելու համար թվով 2 համայնքների ղեկավարներ ենթարկվել են վարչական տույժերի:

Հողերի օտարման գործընթացում համայնքների ղեկավարների կողմից թույլ տրված խախտումների պատճառով մարզի 10 համայնքներում կասեցվել են թվով 11 աճուրդներ:

2009թ. ընթացքում նմանատիպ խախտումների համար մարզի 17 համայնքներում կասեցվել էին 22 աճուրդներ:

Անհրաժեշտ է նշել, որ կառավարության կողմից ձեռնարկված մի շարք արդյունավետ քայլերի շնորհիվ մարզում մեծ թափ է ստացել համայնքներին և քաղաքացիներին պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի օգտագործման համապատասխանեցումը փաստացի վիճակին, մասնավորապես՝ նախկինում որպես ջրովի փաստագրված, իրականում՝ անջրդի վարելահողերի ճշտումը, տարիներ առաջ շարքից դուրս եկած բազմամյա տնկարքների դուրս գրումը:

Հողօգտագործման կանոնակարգման համար մեծ խթան հանդիսացավ արոտների և խոտհարքների վարձակալության տրամադրման կառավարության կողմից հաստատված նոր կարգը, ըստ որի՝ առանց նոտարական վավերացման և պետական գրանցում ստանալու մինչև 3 տարի ժամկետով հնարավորություն ստեղծվեց հողօգտագործողներին վարձակալության տրամադրելու համապատասխան տարածքներ, որի արդյունքում մարզի բազմաթիվ համայնքներում լրացուցիչ վարձակալության տրամադրվեցին շուրջ 10 000 հա արոտներ ու խոտհարքներ, և դրանց օգտագործումը, փաստորեն, բերվեց օրինական դաշտ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզի գյուղատնտեսությունը վարվում է 35897 փոքր գյուղացիական տնտեսությունների միջոցով: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1-1.3 հա գյուղատնտեսական հողատեսքեր. իսկ մեկ տնտեսությանը պատկանող հողատարածքը մասնատված է 3-4 հողակտորի: Ստեղծված իրավիճակը հնարավորություն չի տալիս կիրառել արտադրության արդիական տեխնոլոգիաներ, դժվարություններ են առաջանում արտադրության մեքենայացման, ցանքաշրջանառության կիրառման բնագավառում և հետևանքն այն է, որ արտադրությունը դառնում է անարդյունավետ:

2010թ. բերքի տակ կատարվել է 13038 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք, կամ օգտագործվել է վարելահողերի 34.3 տոկոսը, անցած տարվա 41.9 տոկոսի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հացահատիկի ցանքատարածությունները նվազել են 2945, կարտոֆիլինը՝ 119, տեխնիկական մշակաբույսերինը՝ 2, իսկ բանջարեղենի և կերային մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են համապատասխանաբար՝ 35 և 170 հա-ով:

Հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2009-2010թթ.

գ/տ մշակաբույսեր	տարածությունը հա			
	2009	2010	2010-ը 2009-ի նկատմամբ +/-	2010-ը 2009-ի նկատմամբ %
ընդամենը մարզում <i>այդ թվում՝</i>	15899	13038	-2861	82.0

հացահատիկ	11509	8564	-2945	74.4
կարտոֆիլ	833	714	119	85.7
բանջար	1318	1353	35	102.7
տեխ. մշակաբույսեր	9	7	-2	77.8
կերային մշակաբույսեր	2230	2400	170	107.6

Հացահատիկի ցանքերի պակասը հիմնականում կապված է 2010թ. գարնանը չդադարող հորդառատ անձրևների հետ, որն արգելք հանդիսացավ գարնանացանի աշխատանքները ժամանակին կազմակերպելու համար, իսկ առաջացած գերխոնավությունից ծառերի վրա սկսեցին զարգանալ տարբեր տեսակի սնկային հիվանդություններ /ալրացող, քոս/, որի արդյունքում տուժեցին պտղատու այգիները և վնասվեց սպասվելիք բերքը: Ընթացիկ տարում մարզի գյուղատնտեսության բնագավառը լուրջ վնաս կրեց նաև մայիս-հուլիս ամիսներին տեղացած կարկուտից, որի հետևանքով վնասվեց շուրջ 730 հա պտղատու այգիներ, իսկ գյուղացիական տնտեսություններին հասցրած վնասը կազմեց ավելի քան 427 մլն. դրամ:

Մարզում ռոտզելի հողատարածքները կազմում են 18697 հա: Ընթացիկ տարում ջրօգտագործողների հետ կնքվել է 23230 պայմանագիր 12538.8 հա ընդհանուր ռոտզելի մակերեսով: Սակայն այստեղ չլուծված հարց եղել և մնում է ներտնտեսային ցանցերի մաշվածությունը, որի արդյունքում բարձր է ռոտզման ջրի նորմայից մի քանի անգամ ավել կորուստները: Այս առումով ռոտզման համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքներ են իրականացվում հազարամյակի մարտահրավերներ ծրագրի շրջանակներում Կոտայք, Ակունք, Արզնի, Նոր գյուղ, Եղվարդ, Քասախ, Ջովունի համայնքներում և Վան այգեգործական ընկերությունում, որոնց շինարարական աշխատանքները կսկսվեն 2011թ. մարտ ամսից:

Ընթացիկ տարում ռոտզման ջրի մատակարարման հարցում լուրջ խոչընդոտներ չեն արձանագրվել բացառությամբ օգոստոսի վերջին Կոտայք ՋՕԸ-ի սպասարկման տակ գտնվող Նուռնուս համայնքի տարածքով անցնող դերեվացիոն խողովակի վթարի, որի վերականգնումը տևեց շուրջ 7 օր և արդյունքում ջրատարի սպասարկման գոտում գտնվող ջրօգտագործողները զրկվեցին ջրամատակարարումից:

2010թ. ջրօգտագործողներին մատակարարված ռոտզման ջրի վերաբերյալ առ 31.12.2010թ.

ԶՕԸ -երի անվանումը	Մատակարարված ջրի քանակը հազ. խմ		հատույթը հազ. դրամ		գանձվել է վարձավճար հազ. դրամ		գանձման տոկոսը	
	2009	2010	2009	2010	2009	2010	2009	2010
Կոտայք	9382.7	10090.4	84444.3	110994.4	80345.0	88300.0	95.1	79.5
Ջրվեժ Ձորաղբյուր	4452.0	5849.3	36128.3	45445.9	35795.0	44712.6	99.0	98.3
Նաիրի	5126.4	4926.3	39955.2	48939.5	38914.4	45486.4	95.0	93.0
Եղվարդ	5173.2	5258.6	46559.2	57845.0	49487.0	48325.6	106.2	83.5
Գառնի- Գեղարդ	3650.0	3551.1	32800.0	39062.1	23700.0	30450.0	72.2	78.0
Հրազդան	1548.2	1704.0	13933.8	18747.0	12037.8	14593.0	86.4	78.1
ԸՆԴԱՄԵՆԸ	29332.5	31379.7	253820.8	321033.9	240279.2	271867.6	94.6	85.1

Դատական ատյաններ է ներկայացվել ստացած ռոտզման ջրի դիմաց սիստեմատիկ վճարումներ չկատարող քաղաքացիների գործ Կոտայք ՋՕԸ-ի կողմից 198 գործ 5 մլն գումարով և Հրազդան ՋՕԸ-ի կողմից 7 գործ 992 հազար դրամ գումարով:

Մարզպետարանի լիազորության սահմաններում լուրջ աջակցություն է ցուցաբերվել գյուղացիական տնտեսություններին մթերքների իրացման գործում: Նրանց տրամադրվել է տեղեկատվություն համայնքներում և շուկաներում գյուղ մթերքների պահանջարկի և առաջարկի մասին, ինչպես նաև կատարվել է առք ու վաճառքի միջնորդություններ, որի արդյունքում արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հետ կապված խնդիրներ չեն առաջացել:

Մարզում կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր կենդանիների ավելի քան 8.5 տոկոսը /շուրջ 48.3 հազ. գլուխ, որից կովեր` 24.2 հազ./, ոչխարների և այծերի գրեթե 6.8 տոկոսը /35.2 հազ. գլուխ/ և խոզերի 11.3 տոկոսը /12.7 հազ գլուխ/: 01.01.2010թ. դրությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը մարզում 01.01.2009թ.-ի համեմատ նվազել է շուրջ 7.8 տոկոսով, իսկ մանրիկը` 11 տոկոսով, աճ է գրանցվել խոզերի գլխաքանակի առումով 2.6 տոկոս:

Ընթացիկ տարում գյուղատնտեսական կենդանիների պետպատվերներով նախատեսված հակաանասնահամաճարակային միջոցառումները ըստ տարածաշրջանների և համայնքների կատարված են ամբողջությամբ: 2010 թվականի ընթացքում մարզում արձանագրվել է խոզերի աֆրիկյան ժանտախտի 11 դեպք` 2-ը Նաիրիի, 3-ը Հրազդանի, 6-ը Աբովյանի տարածաշրջաններում: Անկաճ և հարկադիր ոչնչացված կենդանիների թիվը կազմել է 503 գլուխ /անկաճ 75, հարկադիր ոչնչացված 428/:

	Անվանումը	01.01.2010	01.01.2011	շեղումը +-	
1	խոշոր եղջերավոր անասուն	47954	51374	3420	
	որից կովեր	24373	23968	405	
2	մանր եղջերավոր անասուն.	33133	32973	160	
3	խոզեր	15109	12707	2402	
	որից մայրեր				
4	թռչուններ	894666	999405		104739
5	Մեղվաբնտանիք	19868	18992	876	
6	իրացվել է միս կենդանի քաշով անասուն և թռչուն /տոննա/	13100	12100		1000
7	արտադրվել է կաթ /տոննա/	59000	51300		7700
8	արտադրվել է ձու /մլն.հատ/	181.4	173.4		8.0

Ընթացիկ տարվա 2011թ. բերքի տակ կատարվել է 5143 հա աշնանացանի ցանք, որը նախորդ տարվա համեմատ ավել է 229 հա-ով:

Կատարված աշնանացանի ցանքատարածություններից 114 հա-ի ցանքը կատարվել է ՌԴ- ից ներկրված բարձր որակի էլիտար սերմացուով` 2010-2014թթ. հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի սերմարտադրության ծրագրի իրականացման շրջանակներում` Հրազդանի տարածաշրջան 67 հա/ Սուլակ 16, Լեռնանիստ 34, Հրազդան 17/ Նաիրիի տարածաշրջան 47 հա/Թեղենիք 17, Սրջաշեն 30/:

ԲՆԱՊԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքները ներառել են հիմնականում աղբահանության, ընդերքօգտագործման, ջրօգտագործման, անտառտնտեսավարման, շրջակա միջավայրին առնչվող առկա խնդիրների և թերությունների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների կատարմամբ, ապահովելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները:

Հունիսին մարզխորհրդի նիստում քննարկվել է Կոտայքի մարզի բնապահպանական հիմնախնդիրների և հետագա անելիքների մասին հարցը, որին մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարը և նախարարության պատասխանատու աշխատակիցներ:

Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ մարզում բնապահպանական առումով խիստ պրոբլեմատիկ է դարձել թափոնների կառավարման և տեղադրման աշխատանքների կազմակերպումը: Ներկայումս մի շարք համայնքներում /Բյուրեղավան, Նոր Հաճն, Նոր Գեղի և այլն/ խնդիր կա

աղբավայրերի տեղերի հատկացման գործում, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում աղբահանությունը կանոնակարգված ձևով կազմակերպելու համար:

Ակտիվ աշխատանքներ են իրականացվել Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկի հետ, որի միջոցներով Հրազդանի տարածաշրջանում ստեղծվելու է սանիտարական պոլիգոն /աղբավայր/, որի նախագծումը և կառուցումը կսկսվի 2011թ-ից:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հատկապես ճանապարհամերձ տարածքներից գոյացած աղբակույտերի վերացման ուղղությամբ: Այդ աշխատանքներին ներգրավվել են համայնքները, ճանապարհաշինարարները և անտառտնտեսությունները: Դրանք հիմնականում ընդգրկել են մարզի կենտրոնական, հանգստի գոտու և զբոսաշրջության երթուղիները: Չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացման և լիկվիդացման նպատակով կատարված աշխատանքները իրականացվել են մարզի ավելի քան 35 համայնքներում, մաքրված տարածքների ընդհանուր մակերեսը կազմել է շուրջ 3.5 հեկտար: Դրանք հիմնականում ընդգրկել են մարզի կենտրոնական, հանգստի գոտու և զբոսաշրջության երթուղիները:

Միաժամանակ ճանհապարհային ոստիկանության հետ համատեղ միջոցառումներ են իրականացվել մայրուղիներում ավագով և խճով գեռեռնված մեքենաների երթևեկությունը ալգելելու համար: Անցկացված վեց ստուգայցերի ժամանակ վարչական տուգանքի են ենթակվել թվով 15 վարորդներ:

Չնայած վերջին տարիներին մարզում ավելացել է հանքարդյունահանման լիցենզիաներ ձեռք բերած կազմակերպությունների թիվը, դրանք տրված են թվով 65 պինդ օգտակար հանածոների հանքավայրերի տեղամասերի համար, սակայն դրանցից շահագործվել են 35-ը, չեն շահագործվել 8-ը, իսկ մնացած 22-ը գտնվում են փաստաթղթային ձևակերպումների փուլում:

Կատարված հետևողական աշխատանքների շնորհիվ գրեթե բացառվել են անօրինական շահագործման դեպքերը, սակայն վերջնականապես չի կարգավորվել հողի կատեգորիաների փոփոխման գործընթացը, որոնց թվում են՝ Արամուս, Գառնի, Նուռնուս, Լեռնանիստ, համայնքները: Պարբերաբար հսկողություն է իրականացվել պայմանագրերով սահմանված վարձավճարների մուծումը համայնքային բյուջեներ ժամանակին կատարելու համար: Ընդհանրապես աշխատանքներ չեն իրականացվել հանքավայրերի սպառված տեղամասերում վերակուլտիվացման ուղղությամբ:

Ջրօգտագործման ոլորտում կարևորագույն խնդիր է մնում շահագործման թույլտվությունների ձեռք բերումը: Մարզում անցկացված գույքագրման տվյալներով, առկա են 447 բնաղբյուրներ և շուրջ 200 խորքային հորեր, որոնցից շահագործվում է մինչև 60 տոկոսը: Մակայն ջրօգտագործման թույլտվություններ են տրված 135 տնտեսվարող սուբյեկտների, որոնցից 44-ը միայն քաղցրահամ ջրերի աղբյուրների համար, այն դեպքում, երբ այդ մասին բազմիցս զգուշացվել են համայնքապետերը և տնտեսվարողները /ընթացիկ տարում համայնքներից ջրօգտագործման թույլտվություն է ձեռք բերել միայն Արզականը/: Ջրերի էկոլոգիական պահպանության առումով առաջնահերթ խնդիրներից է կեղտաջրերի մաքրման և հեռացման աշխատանքների կազմակերպումը: Մարզում մաքրման կայանների բացակայության և կոյուղատարների վթարների հետևանքով կեղտաջրերը վերջնականապես հեռացվում են Դալար, Մարմարիկ, Ծաղկաձոր, Հրազդան գետերի միջոցով, որը ուղղակի էկոլոգիական աղետ է:

Վերջին տարիներին մեր կողմից փորձ է արվում գոնե լուծել հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման հարցը: Մինչև օրս այդ ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել՝ «Հանգստի աշխարհ», «Աղվերան Հոթել», «Նալ», «Գանձաղբյուր», «Երկրաբան» հանգստյան տների կողմից:

Բավարար աշխատանքներ են կատարվել անտառների պահպանության, պաշտպանության ուղղությամբ: Տարվա ընթացքում Հրազդանի անտառային տարածքներում գրանցվել է հրդեհի երեք դեպք՝ Արզականի անտառապետության Չարենցավանի, Ծաղկաձորի անտառապետության Հրազդանի, Մեղրաձորի անտառապետության Արտավազի հատվածներում: Ձեռնարկված համատեղ միջոցառումների շնորհիվ հրդեհները ժամանակին մարվել են և անտառին էական վնաս չի պատճառվել: Վնասված տարածքները կազմել են 28 հա՝ հիմնականում մասբենիներ և դեղին ակացիա: Բացի այդ անտառամերձ համայնքների տարածքներում տեղի են ունեցել չարձանագրված հրդեհների դեպքեր, որոնք տեղի բնակչության և անտառտնտեսության աշխատակիցների ուժերով կանխվել են:

Հոկտեմբեր ամսին մարզպետի մոտ քննարկվել է «Ապօրինի անտառահատումների դեմ պայքարի միջոցառումների մասին» հարցը, որին մասնակցել են մարզի դատախազը, ոստիկանապետը, բնապահպանական տեսչության պետը, Հրազդանի անտառտնտեսության տնօրենը և անտառամերձ

համայնքների ղեկավարները: Կազմակերպված ստուգայցները տվել են դրական արդյունք, տարվա ընթացքում արձանագրվել է ապօրինի անտառխախտման ընդամենը 3 դեպք, բնությանը հասցված վնասի չափը կազմել է 559.5 հազ. դրամ:

Ընթացիկ տարում մարզի համայնքներում բնապահպանական ծրագրերի իրականացման շրջանակներում ավելացել են ծառատնկման աշխատանքները: <<Հայաստան ծառատնկ ծրագիր>>-ի /<<Էյ-Թի-Փի>> բարեգործական հիմնադրամ/ կողմից տրամադրվել և 12 համայնքներում տնկվել է շուրջ 7000 ծառ և թուփ, իսկ մարզպետարանի և <<Կանաչագարդ երկիր>> հասարակական կազմակերպության համատեղ պայմանագրի համաձայն /որը գործելու է 5 տարի ժամկետով /Թեղենիք, Գետամեջ և Քասախ համայնքներում տնկվել են 8000 հատ հացենի, թխկի, կաղնի, կենսաձառ ծառատեսակներ:

Իրականացվել է հողերի պահպանության ու ապօրինի հողօգտագործման կասեցմանը ուղղված աշխատանքներ և հողի բերրի շերտի օգտագործման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողություն՝ բնապահպանական պետական տեսչության տարածքային բաժնի աշխատակիցների և համայնքապետերի մասնակցությամբ: Արդյունքում 7 քաղաքացիների նկատմամբ կիրառվել է տույժ-տուգանքներ՝ 590.0 հազ. դրամի չափով: Զգուշացվել են՝ Հրագղանի, Ֆանտանի, Ջրաբերի, Կապուտանի և Կոտայքի համայնքապետերը:

Բնապահպանական տեսանկյունից կարևորվում է նաև մթնոլորտային օդի պահպանությունը: Մարզում մթնոլորտի աղտոտողները հիմնականում հանդիսանում են Հրագղանի ցեմենտի գործարանը, Հրագղանի ՋԷԿ-ը և ասֆալտի գործարանները: Մակայն նրանց կողմից կատարված ներդրումները և արտանետումները թույլատրելի սահմանային նորմերին համապատասխանեցնելու միջոցառումները դեռևս հեռու են բավարար լինելուց:

Մթնոլորտային օդի աղտոտումը կանխելու և նվազագույնի հասցնելու նպատակով <<Միկա ցեմենտ>> ՓԲԸ-ի կողմից կազմվել և իրականացվել է մթնոլորտի աղտոտման նվազեցմանն ուղղված կազմակերպչական-տեխնիկական միջոցառումներ, որոնց կատարումը գտնվել է մարզպետարանի հսկողության ներքո:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2010 թվականին մարզում զգալի աշխատանք է տարվել քաղաքաշինության բնագավառում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման՝ հայեցակարգերի մշակման, դպրոցների վերանորոգման նախագծային առաջադրանքների կազմման և վերանորոգման աշխատանքների կազմակերպման, համայնքների ղեկավարների քաղաքաշինական գործունեության վերահսկման, ինքնակամ շինարարության հայտնաբերման և կասեցման վերաբերյալ:

2010 թվականին պետական բյուջեի միջոցներով Կոտայքի մարզին հատկացվել է 624. 26 մլն. դրամ, որից 236.61 մլն. դրամը մարզպետարանի պատվիրատվությամբ հիմնանորոգվող 9 կրթական օբյեկտների համար, իսկ 387.65 մլն. դրամը մարզի 15 կրթական, 1 մարզական և 2 մշակութային օբյեկտների հիմնանորոգման և կառուցման համար, որոնց պատվիրատուն հանդիսանում է քաղաքաշինության նախարարությունը:

Հարկ եմ համարում նշել, որ այս ոլորտում մարզպետարանը լուրջ անելիքներ ունի կապալառուների կողմից իրականացվող շինվերանորոգման աշխատանքների ծավալների և որակի վրա անհրաժեշտ հսկողություն իրականացնելու գործում: Այս մասին է վկայում նաև 2010 թվականին մարզպետարանում ՀՀ նախագահի վերահսկողության ծառայության կողմից իրականացված ստուգումների արդյունքով արձանագրված շինարարական աշխատանքների ծավալային և գնային զգալի հավելագրումների փաստերը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի օգոստոսի 9-ի թիվ 02/01,5/9380-10 հանձնարարականի՝ ուսումնասիրվել է Ջրվեժ, Ողջաբերդ, Գեղաղիք, Գառնի և Գողթ համայնքներով անցնող տուրիստական ավտոճանապարհի հարակից տարածքների շինությունների օրինականության և արտաքին տեսքի բարեկարգման հարցերում:

Գույքագրված 140 ինքնակամ, ճարտարապետական ոչ պատշաճ տեսք ունեցող շինություններից կարգավորվել են 104-ը, 36 օբյեկտների փաստաթղթերի ճշտումը և մասնակի ձևափոխումը կկատարվի 2011 թվականի գարնան առաջին ամիսներին:

Մարզպետարանի ճարտարապետների կողմից Երևան-Սևան ավտոմայրուղու հարակից տարածքների հասարակական սպասարկման օբյեկտների արտաքին վիճակը բարելավելու նպատակով նախագծվեց հասարակական սպասարկման շինությունների 4 նախագծային առաջարկ,

որը քննարկվեց և հավանության արժանացավ ՀՀ քաղաքաշինության նախարարության հանձնաժողովի և ՀՀ գլխավոր ճարտարապետ Ն.Սարգսյանի կողմից:

Նախագծերի վերջնական մշակումից հետո երկու նախագիծ՝ վեց տարբերակով ընդգրկվեց հանրապետական տիպարային նախագծերի ցանկում:

Մարզի բոլոր 67 համայնքներում անցկացվել են քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության պլանային ստուգումներ, որի արդյունքում արձանագրված քաղաքաշինական խախտումների և բացթողումների վերացման նպատակով կայացվել են մարզպետի որոշումներ, և տրվել են պարտադիր կատարման ցուցումներ դրանց վերացման վերաբերյալ:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նվազել են առանց քաղաքաշինական փաստաթղթերի շինարարություն կատարելու, հողագավթման, ապօրինի շինարարություն կատարելու դեպքերը:

Հայտնաբերվել է առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացվող շինարարության 25 դեպք (նախորդ տարի 64 դեպք): Մեկ ապօրինի շինարարության վերաբերյալ հաղորդում է ներկայացվել դատախազություն (նախորդ տարի նույնպես մեկ դեպք):

Աշխատանքներ են տարվել գյուղական համայնքներում անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգների ներդրման ուղղությամբ, որի արդյունքում տրամադրվել են բնակելի տների 15 բազմակի օգտագործման նախագծեր:

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՆՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Կոտայքի մարզում ջրամատակարարումը իրականացվում է <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի կողմից՝ 24, <<Երևան-Ջուր>> ՓԲԸ-ի կողմից՝ 20 և սեփական ուժերով 23 համայնքներում:

Մարզի խմելու ջրի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 516,9 կմ, որից քաղաքային՝ 107 կմ: Ներքին ցանցի երկարությունը 1180 կմ է, որից քաղաքայինը 700 կմ:

Ընդհանուր առմամբ ջրամատակարարման օրական միջին տևողությունը մարզում կազմում է մոտ 11 ժամ, ջրաչափեր են տեղադրված բնակչության շուրջ 76 %-ի մոտ:

Հաշվետու տարում համաշխարհային բանկի կողմից տրամադրված վարկային միջոցներով Հրազդան համայնքում իրականացվեց 474,9 մլն դրամի, Չարենցավան համայնքում 27,5մլն դրամի շինարարական աշխատանքներ, իսկ ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված միջոցներով Հրազդան, Չարենցավան, Սոլակ, Արզել, Աբովյան, Քաղսի և Քարաշամբ համայնքներում կատարվեց 939,5 մլն դրամի աշխատանքներ: Նշված ծրագրերով նախատեսվում է աշխատանքները շարունակել նաև 2011 թվականին:

2010 թվականին ավարտվեց <<Հով-Խաչ>> ՍՊԸ-ի կողմից սեփական ուժերով կառուցվող <<Յոթ Աղբյուր-Գառնի>> ինքնահոս ջրագծի աշխատանքները, որը հնարավորություն տվեց ինքնահոս ջուր ապահովել Գեղարդ, Գողթ և Գառնի համայնքներին, որի համար ծախսվեց շուրջ 2 մլն.ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Մարզի համայնքների կողմից 2010 թվականին սեփական միջոցներով ջրամատակարարման բնագավառում իրականացվել են շուրջ 80 մլն. դրամի շինվերանորոգման աշխատանքներ:

Պետբյուջեից հատկացված 81 մլն.դրամով Մեղրաձոր և Կապուտան համայնքներում կատարվեցին հեղեղատարների մաքրման և գետերի հունների ամրացման աշխատանքներ:

Աշխատանքներ են տարվել մարզի համայնքներում գործող թվով 44 համատիրություններին մասնագիտական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, որը սակայն բավարար չէ նրանց կայացման և բնականոն աշխատանքի համար:

2010 թվականին աշխատանքներ են տարվել նաև համայնքներում բնակչության հատուկ սպասարկման ծառայությունների/ հուղարկավորությունների կազմակերպում, գերեզմանատների շահագործում/ կողմից իրականացվող գործունեության ուսումնասիրման և մարզի տարածքում կենտրոնացված աղբավայրի կառուցման նպատակով իրականացվող միջոցառումների ուղղությամբ:

Չնայած կատարված աշխատանքներին, մարզի բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագաբառում կան լուրջ հիմնախնդիրներ, որոնք առաջնահերթ լուծման կարիք ունեն:

Համակարգի մաշվածությունը, որի պատճառով խմելու ջրի կորուստը մարզի տարածքում անցնում է 80 տոկոսից:

Նոր ջրատարների կառուցման և եղածների վերանորոգման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը:

Կենտրոնացված ջրամատակարարման համակարգից չօգտվող համայնքներում ջրամատակարարման ծառայությունների տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակը եվ մասնագետ աշխատողների պակասը:

4.. Մարզի բնակավայրերին մատակարարվող խմելու ջրի որակի ապահովումը, հատկապես համայնքային ենթակայության ջրամատակարարման համակարգերում խմելու ջրի վարակազերծման միջոցառումների ցածր մակարդակը:

Բազմաբնակարան շենքերում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման համակարգերի մաշվածության և հուսալիության ցածր մակարդակը, տանիքների ու ընդհանուր տարածքների անմխիթար վիճակը:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Տրանսպորտի բնագավառում մարզպետարանը կազմակերպում է ներմարզային երթուղիներով ուղևորափոխադրումների աշխատանքները:

Ընդհանուր առմամբ մարզում գործում են 42 ներմարզային, 25 միջմարզային և 7 ներհամայնքային երթուղիներ:

Հարկ է նշել, որ ներմարզային երթուղիներով ավտոբուսային կապ է ապահովվել մարզի համայնքների 95 տոկոսի հետ:

Ներմարզային երթուղիներով օրեկան կատարվում են շուրջ 350 երթեր փոխադրելով՝ մոտ 3500-4000 ուղևոր:

Մարզպետարանը մշտապես առաջնորդվել է կանոնավոր փոխադրումների մրցույթների կարգի պահանջներով՝, մարզային մրցութային հանձնաժողովներում ընդգրկվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ու ՀՀ ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչները: Դրան հակառակ մարզի հետ կապված միջմարզային երթուղիների մրցույթներին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությունը հանվել է՝ փոփոխելով մրցութային կարգը, իսկ միջմարզային երթուղիների ցանկը չի նախատեսվում համաձայնեցնել մարզպետի հետ, ինչը չի բխում փոխհամաձայնեցված աշխատանքների շահերից:

Հարկ է համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ գործունեության ամբողջ ընթացքում մարզպետարանին տեղեկություններ չեն տրամադրվել ներմարզային երթուղիներում ընդգրկված տրանսպորտային միջոցների վարորդների կողմից թույլ տրված, ինչպես ճանապարհային երթևեկության կանոնների, այնպես էլ ուղևորափոխադրումների կարգի խախտումների մասին: Պարտադիր են համարում ՀՀ տրանսպորտային տեսչության ու ՀՀ ճանապարհային ոստիկանության մարզային ստորաբաժանումների մշտական համագործակցությունը մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման հետ:

Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 593.9 կմ, որից՝ 48.9 կմ միջպետական, 417.2 կմ հանրապետական, 127.8 կմ տեղական նշանակության ճանապարհներ:

138.3 կմ տեղական նշանակության ավտոճանապարհներ ՀՀ կառավարության 10.01.2008թ. N 112-Ն որոշմամբ ընդգրկվել են հանրապետական նշանակության ավտոճանապարհների անվանացանկում և որպես պետական կառավարման մարմին սահմանվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, սակայն այդ ճանապարհահատվածների պահպանության և շահագործման աշխատանքները իրականացվում են մարզպետարանի կողմից:

2010 թ.-ի պետական բյուջեից ընդամենը 80.953 մլն. դրամ գումար է հատկացվել միայն մարզային ենթակայության ճանապարհների պահպանության և շահագործման ծախսերի նպատակով, ինչը հեռու է բավարար լինելուց՝ ճանապարհային ցանցը բարեկարգ պահելու համար:

Հարկ է նշել, որ հատկացված գումարները ամբողջությամբ չեն օգտագործվել կապալառուների կողմից ժամանակին ու նախատեսված ծավալներով աշխատանքները չկատարելու, ձմռան ժամանակաշրջանում եղանակային պայմանների բարենպաստ լինելու և հիմնականում ՀՀ կառավարության 9.12.2004թ. N 1942-Ն որոշմամբ հաստատված մեթոդական ցուցումների ոչ լիարժեքության հետևանքով: ՀՀ կառավարության 4 նոյեմբերի 2010 թվականի N 1419-Ն որոշմամբ հաստատված նոր կարգով նույնպես չի լուծվում ավտոճանապարհների ամբողջ համալիրի շահագործման ընդգրկվածության և հատկացվող գումարների առավել նպատակային և արդյունավետ օգտագործման հարցերը:

Չնայած այն բանին, որ վերջին տարիներին մարզային ճանապարհների ձյունամաքման աշխատանքները անհամեմատ ավելի լավ են կազմակերպում քան նախկինում, բայց և այնպես դեռևս

առկա են որոշ բացթողումներ հատկապես աշխատանքները ուշացումներով սկսելու հարցում, ինչի հետևանքով հաճախակի խախտվում են ավտոբուսային երթուղիների կանոնավոր աշխատանքները:

Միջպետական և հանրապետական ճանապարհների պահպանության ընթացքում նույնպես առկա են բացթողումներ՝ հատկապես ժամանակի առումով: Որպես օրինակ նշեմ, որ Երևան-Սևան ավտոճանապարհի ձյունամաքման աշխատանքները տարբեր կազմակերպությունների կողմից համարյա մշտապես կատարվում են օրվա տարբեր ժամերին, ինչի հետևանքով կտրուկ տարբերվում են ճանապարհահատվածները իրենց վիճակով:

Անհրաժեշտ է ավելի ակտիվացնել ճանապարհային ոստիկանության ծառայությունների ընդգրկվածությունը ճանապարհների ձմեռային պահպանության գործում, ինչպես նաև նորոգվող ճանապարհահատվածներում երթևեկության կազմակերպման՝ ըստ նախագծերի ճանապարհային նշաններով կահավորման հանդեպ մշտական հսկողություն սահմանելու հարցերում:

Հաշվետու տարում նույնպես ծրագրերից դուրս մնացին ՀՀ նախագահի 30.06.08թ. N 128 Ա կարգադրությամբ հաստատված (նախընտրական խոստումներ) 740 մլն. դրամի աշխատանքները (Լեռնանիստ 240 մլն. դր., Չարենցավան 100 մլն. դր, Մեղրաձոր 400 մլն. դր), որոնք նախատեսվում էին ավարտել մինչև 2012 թիվը:

Բավականին աշխատանքներ են կազմակերպվել ճանապարհամերձ օբյեկտների վիճակի բարելավման, անհրաժեշտ դեպքերում ապամոնտաժման և ընդհանրապես հարցի վերջնական կարգավորման ու օրինականացման ուղղությամբ:

Ձմեռային պահպանման ընթացքում մարզպետարանի կողմից պարբերաբար ուսումնասիրվել են միջպետական և հանրապետական ճանապարհներին տիրող իրավախճակները և մշտական կապ է պահպանվել սպասարկվող կազմակերպությունների հետ:

Տարբեր ծրագրերով մարզում իրականացվել են մեծածավալ ճանապարհաշինական աշխատանքներ և շահագործման են հանձնվել Փյունիկ-Հանքավան 13.06 կմ, Զորավան-Արագյուղ 6.0 կմ, Երևան-Եղվարդ 8.0 կմ, Բուժական-Սարալանջ 8.9 կմ, Զովունի-Սրգաշեն 8.48 կմ. Բալահովիտ-Մայակովսկի-Արամուս-Կաթնաղբյուր-Զառ-Սևաբերդ 16.5 կմ ճանապարհահատվածները, 60.94 կմ ընդհանուր երկարությամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են մարզպետարանի տեղեկատվական քաղաքականության կազմակերպման ու իրականացման աշխատանքները:

Պատրաստված և թողարկված տեսանյութերի, պաշտոնական հաղորդագրությունների, տարաբնույթ հաղորդաշարերի, հեռուստաֆիլմերի տեսքով կազմակերպվել են մարզպետարանի գործունեության վերաբերյալ հասարակական իրազեկման գործընթացները:

Մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվել, ինչպես նաև մարզում գործող զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվել է մարզպետարանի տարեկան աշխատանքային ծրագիրը, ամենամյա միջոցառումների ժամանակացույցերը մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները, տարեկան և ընթացիկ հաշվետվությունները:

Կայքի տեխնիկական ու ծրագրային հնարավորությունների սահմաններում տեղադրվել են նաև համայնքների ղեկավարների ու ավագանու որոշումները:

Տարվա ընթացքում կազմակերպված մարզի խորհրդի բոլոր նիստերը լուսաբանվել են ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կողմից մշակված մեթոդաբանության համաձայն:

Ապահովվել է մարզի համայնքների ղեկավարների կողմից հանրությանը ներկայացվող հաշվետվությունների լուսաբանումն ու հանրային իրազեկումը:

Շարունակաբար վերահաշվառվել և համապատասխան վերլուծությունների են ենթարկվել մարզի համայնքներում առկա հանրային իրազեկման միջոցները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

- Մարզպետարանի պաշտոնական կայքի արդիականացում, տեխնիկական ու ծրագրային հնարավորությունների ընդլայնում:

2010թ. ընթացքում մարզպետարանում ստացվել է 7903 փաստաթուղթ նախորդ տարվա 9010 փաստաթղթի դիմաց կամ 1107-ով պակաս, իսկ դիմումների թիվը կազմել է 1552՝ նախորդ տարվա 1031 դիմումի դիմաց, կամ դիմումների թվը ավելացել է 521-ով:

Յուրաքանչյուր շաբաթ մարզի 4 տարածաշրջաններում մարզպետի մոտ կազմակերպված ընդունելություններին մասնակցել են 601 քաղաքացիներ՝ նախորդ տարվա 408-ի փոխարեն:

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել է 604 որոշում, 132 կարգադրություն, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ 269 հրաման:

Մարզպետարանում 2010 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ աշխատում են 142 աշխատակիցներ, որից 122-ը քաղաքացիական ծառայողներ:

Հաշվետու տարում դասային աստիճան է շնորհվել 8, առավելագույն դասային աստիճան՝ 17 քաղաքացիական ծառայողների: Ատեստավորվել են 41, վերապատրաստվել են 48, խրախուսվել են 1, կարգապահական տույժի են ենթարկվել 1 քաղաքացիական ծառայողներ:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ